ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» հունվարի 2012թ. **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով 2011 թվականի դեկտեմբերի 12-ին «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի և Երևան համայնքի միջև կնքված նվիրատվության պայմանագիրը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցները և ապրանքատեսակները՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2011 թվականի դեկտեմբերի 12-ին «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի և Երևան համայնքի միջև նվիրատվության պայմանագրի համաձայն՝ բարեգործական նպատակով տրանսպորտային միջոցները և ապրանքատեսակները «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից նվիրվել է Երևանի քաղաքային համայնքին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության պայմանագիրը համարվում է լուծված: Ուստի անհրաժեշտություն է առաջացել կայացնել որոշում՝ նվերներն ընդունելու մասին:

Ելնելով վերոգրյալից Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Հավելված
Երևանի ավագանու
« » ---------- 2011թ. N_____-Ա որոշման

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

	Մակնիշ	Տարեթիվ	Շարժիչ	Թափքի համար	Հենասարքի համար	Տեսակը
1.	Գազ-53 14 01	1987	N/N		N/N N/T	բեռնատար
2.	Գազ-53	1991	N/N		N/N N/T	բեռնատար
3.	Գազ-53 14 01	1990	N/N		N/N N/T	բեռնատար
4.	Զիլ 43 14 12	1986	872831		2463654	հատուկ
5.	Զիլ 43 14 12	1989	366764		2879135	հատուկ
6.	Գազ 53 14 01	1990	N/N		N/N N/T	բեռնատար
7.	Զիլ 130	1982	NN		N/N N/T	հատուկ
8.	Գազ 53 14 01	1991	N/N		N/N N/T	բեռնատար
9.	Զիլ 43 14 12	1991	812750Н		3131472	հատուկ
10	Զիլ 43 14 10	1987	352342		26654650	հատուկ

ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐ

	Ապրանքի անվանումը	Քանակ	Միավորի արժեք	Արժեքը ՀՀդրամ
1.	Համակարգիչ	30 հատ	130000	3900000
2.	Մանկական խաղահրապարակ	160 կոմպ	665693.1	106510910.15
3.	Թնկապներ	90 հատ	10296.48	926683.20
4.	Փողոցները զարդարելու լույսեր	5350 հատ	13884.42	74281666.25
5.	Ձյուն մաքրող մեքենա Չինական արտադրության	2 հատ	10119500	20239000
6.	Շրջանակներ	22 հատ	12900	283800

7.	Շապիկներ	20500 հատ	541.1	11093102.40
8.	Սանմաքրման մեքենա բելոռուսական արտադրության	15 հատ	6992231.8	104883476.44
9.	Սպորտային գույք	82 կոմպ	300000	24600000
10.	Տոնածառը զարդարելու լուսավորող սարքավորումներ	550 հատ	7156.4	3936021.25
11.	Տոնածառ-1 հատ, աստղ-1 հատ, խաղալիք-200 հատ			4037303.50
12.	Արհեստական տոնածառներ և տոնածառի խաղալիքներ	10074 կգ	2273.3	22900880.25
13.	Դրոշակներ	8500 հատ	758688	6448848

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ